ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2025թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՎԵՏԻՔ (ԱՎԻԿ) ՎԻԳԵՆԻ ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N 604-Ն որոշման N 1 հավելվածի 46-րդ կետի 1-ին ենթակետով, 56-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի 2807-րդ տարեդարձի առթիվ, Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ավետիք (Ավիկ) Վիգենի Իսահակյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՎԵՏԻՔ (ԱՎԻԿ) ԻՍԱՀԱԿՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ավետիք Իսահակյանը ծնվել է 1944 թվականի նոյեմբերի 27-ին, Երևանում: Նա հայ բանաստեղծ, արձակագիր Ավետիք Իսահակյանի թոռն է:

1952-1962թթ. սովորել և ավարտել է Երևանի Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ դպրոցը:

1963-1967թթ. բարձրագույն ուսումը ստացել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի լրագրության բաժնում: Այնուհետև՝ 1968-1972թթ. ընդունվել է պետհամալսարանի ասպիրանտուրա, ուսումը որպես ասպիրանտ անց է կացրել ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Մ.Գորկու անվան Համաշխարհային գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում:

1973թ. Երևանի պետհամալսարանում պաշտպանել է ատենախոսություն՝ «Ազատության կոնցեպցիան Ավ. Իսահակյանի արձակում» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1974թ. ընդունվել է աշխատանքի ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում, որպես կրտսեր գիտաշխատող: 1977թ. տեղափոխվել է աշխատանքի ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ: 1987թ. պաշտպանել է ատենախոսություն՝ «Ավ. Իսահակյանը և ռուս գրականությունը» թեմայով և ստացել բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

1986-1988թթ. համատեղության կարգով աշխատել է որպես Երևանի Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարանի տնօրեն: 1989թ.՝ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Տեքստաբանության բաժնի վարիչ: 2008թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն և աշխատել մինչև 2015թ.: 2015 թվականից նույն ինստիտուտի Տեքստաբանության բաժնի վարիչն է և ինստիտուտի տնօրենի խորհրդականը՝ մինչև օրս:

1975-1993թթ. և 2000-2008թթ. հայ և համաշխարհային գրականություն է դասավանդել Երևանի պետհամալսարանում, իսկ 1999-2009թթ.՝ Երևանի Հրաչյա Աճառյան համալսարանում:

1972թ. Հայաստանի ժուռնալիստների միության անդամ է, 1977թ.՝ Հայաստանի գրողների միության անդամ:

Պատրաստել է հրատարակության, կազմել, խմբագրել և առաջաբան է գրել Ավ. Իսահակյանի քսանից ավել գրական երկերի, որոնք հրատարակվել են Երևանում, Մոսկվայում, Վենետիկում, Լոս Անջելեսում, Դամասկոսում:

Հեղինակ է 300-ից ավելի գիտական աշխատությունների, հրապարակումների և հոդվածների:

1998 թվականից ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում ղեկավարում է Ավ. Իսահակյանի երկերի լիակատար հրատարակության (14 հատորով) գիտական խումբը:

Ավետիք Իսահակյանի գրչին են պատկանում «Ավ. Իսահակյանի արձակը» (1975թ.), «Ավ. Իսահակյանը և Ռուսաստանը» (ռուսերեն, Մոսկվա, 1988թ.), «Ավ. Իսահակյան. գիտական կենսագրություն» (2000թ.), «Ավ. Իսահակյանի պոեմները» (2007թ.), «Բարև, Վարպետ» (2008թ.), որտեղ մանրամասնորեն ներկայացվում է անցյալ դարի, Ավ. Իսահակյանի ժամանակների Երևանը, «Երևանը երազում է արթմնի, երկու դարի միջև» (2 հատորով, 2014թ.), նաև ռուսերեն «Ереван во сне и наяву» (2016թ.), «Սա իմ ընտրությունն է» (վեպ, նաև ռուսերեն, 2021թ.), «Սևանա կղզի» (հուշապատում, 2022թ.) գրքերը:

2009թ. Ավետիք Իսահակյանն արժանացել է ԲՈՀ-ի կողմից պրոֆեսորի պատվավոր կոչմանը, 2012թ.՝ ՀՀ արվեստի վաստակավոր գործչի կոչմանը, պարգևատրվել է Մովսես Խորենացի մեդալով և այլ մեդալներով: 2012թ. արժանացել է «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչմանը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ավետիք (Ավիկ) Իսահակյանի ներդրած նշանակալի ավանդը Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում՝ առաջարկվում է Ավետիք (Ավիկ) Վիգենի Իսահակյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ